

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 34-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ,

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 34-ՐԴ ՊԱՆԾԱԼԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ: ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԽԱԽՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԾԱՂԿԻ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃԻ ՄԵՐ ՆՎԻՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ԱՌ ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԲՈԼՈՐԻ ՍՐՏԵՐՈՒՄ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻ ՀԻԱՍՔԱՆՋ ԴՐՈՇԻ ՏԱԿ ԱՊՐՈՒՄ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ Է ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

28 Նոյեմբերի 1954 թ.,
Էջմիածին: